ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՇՏԱՐԱԿԻ ՆՈՐԱՅՐ ՍԻՍԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԴՊՐՈՑԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՁԵՎԵՐԸ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԻՆԵ ՎԱՀԱՆՅԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՔՐԻՍՏԻՆԵ ՆԵՐՍԻՍԻՅԱՆ

ԱՇՏԱՐԱԿ 2022

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ***3***

Գլուխ 1.Դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեության բովանդակության և ձևերի ճշգրիտ սահմանումը ըստ ահրաժեշտության, ճիշտ ժամանակին ***5***

1.1. Ընտանիք **6**

1.2. Դպրոց **9**

Գլուխ 2.Դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեության բովանդակության և ձևերի անհատականացումը՝ այն բխեցնելով սովորողներիի անհատական պահանջներից և կարիքներից ***15***

Եզրակացություն ***20***

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ ***22***

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության բովանդակությունը գիտելիքների,կարողությունների և հմտությունների ճշգրիտ սահմանված շրջան է, որը պետք է լինի շարունակական գործընթաց:Այստեղ կարևոր և անփոխարինելի դեր ունի դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեությունը:Մեր օրերում սովորողների ճիշտ դաստիարակության հարցով հետաքրքրքրված է ամբողջ հասարակությունը:Եվ դպրոցն այն վայրն է,որը կազմակերպում, ուղղորդում է ընտանիքի և հասարակության համատեղ գործունեությունը՝ հանդիսանալով անմիջական մասնակից և համակարգող:

Կրթական չափորոշիչի նպատակը հասարակական անձի ձևավորումն է,որը պետք է ունենա կարողունակություններ,որոնք էլ կօգնեն առողջ հասարակության ձևավորման գործընթացին: Այս առումով մեծ է դպրոց-ընտանիք համագործակցության դերը: Շատ կարևոր են համագործակցության բովանդակությունն ու ձևերը, քանի որ ուսումնական գործընթացի իրականացումը ուղղորդված է դեպի ճիշտ և անթերի արժեհամակարգի կերտումը:Եվ այս ամենը չենք կարող դնել կամ դպրոցի, կամ ընտանիքի պատասխանատվության ներքո:Սովորողի կրթության և դաստիարակության համար միաժամանակ պատասխանատու են երկուսն էլ:Կրթության հիմքում մշտապես պետք է լինեն աշխատասիրության, մարդասիրության, ներդաշնակաության, խելացիության սերմանումը:Այս ամենը ոչ թե պետք է լինեն լոկ խոսքեր,այլ օրինակ, ապրելաձև, լինեն հասկանալի և ներկայացվեն պարզ ու հստակ :

Դպրոց և ընտանիք համագործակցության մեջ յուրաքանչյուր կողմ պետք է հստակ գիտակցի իր անելիքներն ու գործողությունները, ստեղծի ներդաշնակություն:

Մեր օրերում գիտատեխնիկական առաջընթացի,մարդկանց զբաղվածության պատճառով անհատի ձևավորման գործընթացի հիմնական և պատասխանատու մասը բաժին է ընկնում դպրոցին, հիմնականում՝ ուսուցչին:Այստեղ հարկ է նշել, որ դպրոցի աշխատանքը կլինի արդյունավետ, երբ կա համագործակցություն ընտանիքի հետ:

Արդի ժամանակներում կարևորվում է նաև ներառական կրթության ճիշտ և անթերի իրականացումը: Այն ևս կլինի ստացված և կծառայի նպատակին, եթե լինի դպրոց և ընտանիք համակարգված գործակցություն:

Դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեության իրականացումը պետք է կատարել՝ հստակեցնելով արդիականությունը, նպատակը և խնդիրները:

Հետազոտության թեմայի արդիականությունը

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է ընտանիքի և դպրոցի միջև համատեղ գործունեության բովանդակության և ձևերի կառուցողական, գործ-նական կիրառման անհրաժեշտությամբ և շարունակականությամբ:

Հետազոտության նպատակը

Լուծել անհատի կրթության որակի բարելավման, կրթության անհատականցման, հա-վասար կրթություն իրականացնելու հարցը:

Հետազոտության խնդիրները

1. Ճշգրիտ սահմանել դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեության բովանդակությունը և ձևերն՝ ըստ անհրաժեշտության և ճիշտ ժամանակին:

2.Անհատականացնել դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեության բովանդա-կությունը և ձևերը՝ այն բխեցնելով սովորողների անձնական պահանջներից և կարքներից:

Գլուխ 1.Դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեության բովանդակության և ձևերի ճշգրիտ սահմանումը ըստ անհրաժեշտության, ճիշտ ժամանակին

Կրթությունը սովորելն ավելի պարզ ու հստակ դարձնելու գործընթաց է կամ գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների, արժեքների ձեռքբերում: Կրթությունը իրականացվում է հիմնականում դպրոցում, ուսուցիչների ուղղորդմամբ, սակայն անհատը կարող է և ինքնակրթվել:Կրթություն ստանում են նաև ընտանիքում,այն միջա-վայրում,որտեղ գտնվում է անհատը:

Կրթության կազմակերպումը պատասխանատու, շարունակական, կարևոր, գրագետ,պարտադիր գործընթաց է,որի ընթացքում կարևորվում է բոլորի հետաքրքրվածությունը և սրտացավությունը:Երբ կրթության պատասխանատուն հետևողական է , համապատասխանեցնում է իր խոսքն ու գործը, ապա դրական արդյունքը սպասեցնել չի տա:

Կրթվելը ունի տարբեր ձևեր, և այն կարող է իրականացվել նաև համացանցի,հեռուստատեսության,արտադպրոցական դասընթացների, այլ ուսումնական հատսատությունների միջոցով:Այստեղ հարկ է նշել,որ վերը թվարկվածները պետք է լինեն հավելող և լրացնող, իսկ հիմնական կրթություն անհատը ստանում է դպրոցում և ընտանիքում, այս երկուսի համատեղ գուրծունեության արդյունքում:Եվ կրթություն բառի համար կարող ենք կիրառել ստորև ներկայացված սխեման:



Դպրոցն այն վայրն է,որտեղ երեխան ստանում է համակարգված,անհատական և նպատակային կրթություն: Այն կազմակերպում և ուղղություն է տալ ընտանիքի և հա-սարակության համատեղ գործունեությանը՝ նպաստելով անհատի ճշգրիտ դաստիա-րակման գործին:

1.1. Ընտանիք

Ընտանիքը պետք է լինի հասարակական միավոր, որտեղ ծնվում,դաստիարակվում և կրթվում է երեխան: Ընտանեկան ճիշտ միջավայրը նպաստում է երեխայի կողմից շրջապատի ճանաչմանը, սոցիալիզացման առաջին փորձերի կատարմանը, որոշակի գիտելիքների ձեռքբերմանը:Ծնողները երեխային դաստիարակում են,անձնական օրինակով նպաստում դրա լավ կամ վատ կատարմանը, երեխաների հետ կիսում կենցաղը, հոգում նրանց և շրջապատի մասին:Շատ հաճախ անձնական օրինակը ավելի խոսուն է, քան երկար-բարակ խոսքը՝ համեմված բացառիկ ու գեղեցիկ արտահայտություններով:Լինում են դեպքեր էլ, որ օրինակը կարող է որևէ դեր չխաղալ երեխայի դաստիարակության գործում:Փոխարենը նա կարող է ինքնուրույն, իր ուսումնասիրություններով, իր աչքի տեսածով սովորել լավն էլ, վատն էլ միաժամանակ կամ առանձին-առանձին:Այստեղ շատ կարևոր են ընտանեկան փոխհարաբերությունները,որոնք կարող են ունենալ կառուցող կամ քայքայիչ ազդեցություն բարոյական որակների ձևավորման գործում:Եթե երեխան տեսնում է սեր, հարգանք, ներդաշնակություն, ապա հիմնականում կդառնա այս ամենի կրողը:Սա նպաստում է երեխայի մոտ ճիշտ զգացմունքների, բնավորության լավ հատկանիշների ձևավորմանը:

Երեխայի համար պատասխանատու պետք է լինեն բոլորը,ովքեր ընտանիքի ան-դամ են և պատրաստ են փոխել իրենց բնավորության այնպիսի գծեր, որոնք կարող են ունենալ բացասական ազդեցություն: Սա նշանակում է, որ ծնողներն իրենք էլ պետք է շարունակաբար ինքնադաստիարակվեն և ձգտեն հնարավորինս դառնալ դրականի կրողը:

Այս ամենի հետ մեկտեղ կարող են լինել անբարենպաստ պայմաններ, որոնք խանգարում են ընտանեկան ճիշտ դաստիարակությանը՝ բնակարանային խնդիրներ, կենցաղային ցածր կուլտուրա, խելացի և ժամանցային վայրերի բացակայություն,արտադպրոցական,մարզական խմբակների սակավություն կամ բացակայություն,պատերազմի հետևանքներ, ընտանիքում կանանց և տղա-մարդկանց իրավունքների ոտնահարման դեպքեր, պարտականությունների կա-տարման չարաշահում և այս բոլորից բխող հետևանքներ:

Կրթության և դաստիարակության գործընթացին կարող են դրական կամ բացասական ազդել խիստ անհատական պատճառներ՝ նախապաշարմունքներ, մեծերի հանդեպ հարգանքի մասին սխալ և կարծրատիպային մտածելակերպ, դաստիարակության քարացած և ոչ արդիական բովանդակություն, անընդհատ այլ անձանց վրա պատասխանատվություն դնելը և մեղք բարդելը, անար-դար,եսակենտրոն որոշումներ կայացնելը, երեխային անընդհատ ուղղորդել ամեն ինչում և ամեն վայրում,ընտանիքում միմյանց հետ սխալ շփումն ու հաղորդակցվելը, ծնողների անզուսպ արտահայտությունների և վարքի առկայությունը,որոնցից բխող հետևանքները կարող են հանգեցնել ծնողների և երեխաների ճակատագրական բախումների և պատճառ դառնալ տարաձայնությունների: Ընտանիաքում դաստիարակչական գործունեությունը, ծնողների պարտականությունները չի կարելի բաժանել:Հաճախ որդին հոր օրինակի կրողն է,իսկ դուստրը՝ մոր, որդու համար հարցերի լուծումը կարող է դյուրին լինել հոր հետ, իսկ աղջկանը՝ մոր: Սակայն սա կարող է դիտվել որպես կարծրատիպ, և տեղերը փոփոխման ենթակա են: Եվ դաստիարակության գործընթացի պարտականությունները չի կարելի դնել ծնողներց մեկի վրա և անընդհատ պահանջել ավելի լավ արդյունք:

Ընտանեկան փոխհարաբերություններում երեխաներին չի կարելի ըստ սեռերի ցույց տալ խտրական վերաբերմունք.աղջկանը զրկել ամեն ինչից, թույլ չտալ խոսել,արտահայտվել,փոխարենը տղային չմերժել ամեն ինչում կամ էլ ճիշտ հակառակը:

Ընտանիքում դաստիարակության գործում ծնողները, մեծահասակները մյուս անդամները(տատիկ, պապիկ, հորեղբայր, հորաքույր,մորեղբայր,մորաքույր և այլն)պետք է լրացնեն միմյանց, բայց ոչ մրցակցեն,թե ում խոսքը պետք է լինի ընդունելի երեխայի համար:(2,էջ՝13-19)

Ծնողների կողմից երեխային լիարժեք ճանաչելը շատ կարևոր է և պարտադիր,այն կնպաստի անաչառ, չխանգարող, չվնասող որոշումների կայացմանը: Նրանք պարտավոր են հստակ իմանալ իրենց երեխայի առողջական վիճակի մասին, և երբեք չփորձել այն դարձնել վնասակար հենց երեխայի համար:Հաճախ ծնողները առողջական խնդիրներ ունեցող երեխայի փոխարեն փորձում են անել ամեն ինչ՝ սկսած զանազան բարդության աշխատանքներից մինչև նրանց մտածելու և արտահայտվելու հնարավորությունից զրկելը: Ծնողի կողմից անգամ փորձ է արվում երեխայի մոտ ձևավորել զոհի կերպար,որի պատճառով կարող է չարաշահվել շրջապատի այլ անձանց բարեգթությունը: Սա իհարկե վնասակար է երեխայի համար, միևնույն պահին վնասակար է շրջապատի համար:

21-րդ դարում ընտանիքներում երեխայի դաստիարակության գործում երբեմն

կարող են դրսևորվել հին կենցաղի վատ մնացուկները: Բացառված չէ, որ շատ ընտանիքներ տարբեր վնասակար աղանդների կրողներն են,և սա բացասաբար է ազդում երեխայի հոգեբանության վրա: Կամ քարացած և տգետ կարծրատիպերի, քաղքենիական պատկերացումների,սխալ արժեքների սերմանողն ու պարտադրողն են:Ցավալի է,բայց այս ամենը կարող է ուղղորդվել ֆիզիկական և հոգեբանական բռնության գործադրումով՝ վիրավորելով և վնասելով երեխայի արժանապատվությունը:

Ընտանիքում դաստիրակության յուրաքանչյուր քայլ պետք է կատարվի նրբանկատ և տրամաբանված՝ երեխայի մեջ ստեղծելով պատճառահետևանքային կապ: Տարբեր տարիքային խմբերի երեխաների մոտ ծագած յուրաքանչյուր հարցին պետք է տրվի ճիշտ և հստակ պատասխան: Երբեք չի կարելի ասել չգիտեմ, չեմ ուզում պատասխանել, տրամադրություն չունեմ, խոսելու ժամանակ չկա և նմանատիպ արտահայտություններ,որոնք անպայման ունենում են բացասական ազդեցություն երեխայի դեռևս ձևավորման փուլում գտնվող ինքնագնահատականի վրա: Յուրաքանչյուր բան, որն արգելվում է,պետք է ունենա իր ճիշտ պատճառաբանությունը. Կարելի է օրինակ ասել,որ հեռախոսով չի կարելի խաղալ,որովհետև այն կապի միջոց է,համացանցը պետք է օգտագործել կրթվելու,օգտակար ժամանցի համար,այլ ոչ թե խաղադրույքների համար,որոնք վնասակար են, ավելի մեծ տարիքում կարելի է տալ նախնական գիտելիքներ կյանքի տարբեր ոլորտների մասին, այսինքն՝ տնտեսագիտական, քաղաքա-ցիական, հասարկագիտական դաստիարակություն և բացատրել, թե ինչ է պատասխանատվությունը: Ցանկացած հարց պետք է ունենա համոզիչ և տրամաբանված պատասխան:

Ընտանիքում են ձևավորվում բազմաթիվ հմտություններ, կարողություններ, սովորություններ, որոնք ոչ միշտ են միանշանակ ճիշտ կամ սխալ:Կարող են ձևավորվել աշխարհայացքային,լսելու և դատողություններ անելու, ինքնուրուլության, հարմարվողականության, կարեկցանքի, համագործակցելու, հակամարտությունների կարգավորման և այլ հմտություններ: Երեխան ծանոթանում է, թե ընտանիքում մեծերը ինչ վերաբերմունք ունեն իրենց մասնագիտության, պարտականությունների, կատարվող իրադարձությունների նկատմամբ, մեծերի կողմից հայտնած կարծիքները միշտ ազդեցություն են ունենում երեխայի աշխարհայացքի ձևավորման և նրա արարքների վրա: Սրա հետ մեկտեղ երեխայի վրա լավ կամ վատ ազդեցություն կարող են ունենալ ծնողների հայտնած կարծիքները հասարակական տարբեր շերտերի մասին, բառերի սխալ ընտրությունը կարող է նույնիսկ ունենալ կործանարար ազդեցություն:Ծնողների հասարակական դիրքը, շրջապատում նրանց

ցուցաբերած վարքագիծը ևս կարևոր են և այստեղ է, որ գոր-ծում է ճիշտ կամ սխալ օրինակ լինելու հանգամանքը: Երեխան չափազանց ուշա-դիր, նրբանկատ էակ է, որի համար շրջապատի յուրաքանչյուր մարդու արարք և քայլ լինում է շրջադարձային, քանի որ նա դաստիարակվում է ամեն վայրկ-յան:Այստեղ հարկ է հիշել Մակարենկոյի խոսքերը օրինակի վճռորոշ լինելու մասին. «Չմտածեք թե դուք երեխային դաստիարակում եք միայն այն ժամանակ, երբ նրա հետ խոսում եք կամ խրատ եք տալիս,կամ հրամայում եք նրա:Դուք նրան դաստի-արակում եք ձեր կյանքի յուրաքանչյուր պահին,նույնիսկ այն ժամանակ,երբ տանը չեք: Ինչպես եք դուք հագնվում,ինչպես եք խոսում ուրիշ մարդկանց հետ և ուրիշ մարդկանց մասին, ինչպես եք ուրախանում կամ տխրում, ինչպես եք վերաբերվում ձեր բարեկամների ու թշնամիների հետ, ինչպես եք ծիծաղում,թերթ կարդում՝ այս ամենը երեխայի համար մեծ նշանակություն ունի »:(1,էջ՝ 740) Այս խոսքերը բոլորին սովորեցնում են պարզ ճշմարտություն.երեխան պետք է դատիարակվի այնպես, որ օրինակը չդառնա կործանարար,և որևէ մեկին պատճենելով նմանվելը չդառնա նպատակ: Անհրաժեշտ է նրա գիտակցությանը հասցնել, որ շրջապատի բոլոր օրինակները դիտարկելով պետք է ստեղծել սեփականը,անհատականը, այլ ոչ թե՝ կրկնօրինակել:

1.2. Դպրոց

Դպրոցը վայր է, հաստատություն, որտեղ անցնում է անձի մանկական տարիների մեծ մասը, պատանեկությունը և վաղ երտասարդությունը, երբ շատ կարևոր որակներ, առաջանում կամ փոխվում են, սովորում է, թե ով է ինքը, ինչ է անհրաժետ իրեն, ով է լինելու հետագայում: Մեկ խոսքով ասած՝ դպրոցում երեխան պետք է իրեն զգա հարմարավետ, հաճախի սիրով, այնտեղ պետք է ստեղծվեն բոլոր պայ-մանները նոր, անհրաժեշտ հմտությունների ձեռքբերման համար:Երեխան դըպ-րոցում պարտադիր պետք է ունենա մինչ այդ չիմացածը սովորելու տարբերակներ՝ ըստ անձնային անհատականության: Դպրոցը պետք է լինի զարգացող և անընդհատ ինքնակատարելագործվող հաստատություն, և այս փաստը ավելի է կարևորվում 21–րդ դարում, երբ տեղի են ունենում աշխարհաքաղաքական տարատեսակ, անակն-կալ փոփոխություններ:Դպրոցական համակարգը պետք է ունենա մեկ նպատակ՝ արդյունավետ և նպատակաուղղված կրթության իրականացում բոլորի համար ան-կախ սեռից, սոցիալական վիճակից, մտածելակերպից: Դպրոցում երեխայի կրթա-կան և դաստիարակչական գործընթացի կազմակերպման մասնակիցներն են՝ սո-վորողը, ծնողը, ուսուցիչը, մանկավարժական այլ աշխատողներ, վարչական աշ-խատողներ և այլն: Յուրաքանչյուր սովորող ունի հավասար իրավունքներ և պար-

տականություններ, որոնցից յուրաքանչյուրի խախտումը կամ անտեսումը կարող է բերել գործընթացի խաթարմանը կամ տապալմանը: Մեր օրերում կարևորվում է այն հանգամանքը, որ երեխան պետք է ստանա համակարգված և լիարժեք կրթություն, պետք է լինի պաշտպանված ֆիզիկական, հոգեբանական ճնշումներից, հասարա-կության կողմից ցանկացած կարգի շահագործումից: Հաճախելով դպրոց՝ երեխան հայտնվում է նոր, անծանոթ, հետաքրքիր, անհասկանալի միջավայրում: Ընտանեկան հարազատ մթնոլորտը փոխարինվում է հետաքրքիր, գրավիչ, միևնույն պահին անորոշ մթնոլորտով:Այստեղ շատ կարևոր է դպրոցի, ուսուցչի և ընտանիքի համատեղ գործունեության բովանդակության և ձևերի ճշգրիտ մշակումը:Համատեղ գործունեության ընթացքում երեխայի կյանքում դպրոցի և ընտանիքի պատասխանատվությունը պետք է դնել հավասար հարթության վրա՝ երեխային դիտելով որպես հասարակության լիիրավ անդամ:Նշված կապը կարող ենք ներկայացնել հետևյալ սխեմայով.

Անհատը ծնվում, ձևավորվում է ընտանիքում, այնուհետև նրա կրթությունը և դաստիարակությունը իրականացնում է դպրոցը ընտանիքի հետ, ինչպես նաև հասարակության մեջ: Մեր կողմից արդեն նշվել է,որ դաստիարակությունը պետք է լինի դպրոցի և ծնողների համատեղ աշխատանքի արդյունքը, չկա պար-տականությունների առանձնացում:Գրեթե նույն կերպ պետք է ընթանա դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեությունը, որևէ պարտականություն չբարդել միայն մեկ կողմի վրա,կրթության և դաստիարակության համար պատասխանատու են դպրոցը և ընտանիքը միասին: Դպրոցի գործառույթներն իրականացնողը ուսու-ցիչներն են, ընտանիքինը՝ ծնողները կամ խնամակալները:Երբ ծնողները

ներգրավում են գործընթացում ճիշտ տեղում, ճիշտ ժամանակին,վերջնարդյունքը դրական է: Սա նպաստում է առաջին հերթին անձի վարքագծի համաչափ զարգացմանը:Համատեղ գործունեության արդյունքում անհատը տանը և դպրոցում սկսում է դրսևորել նույն կանոնավոր վարքագիծը,սխալների ուղղումը դառնում է դյուրին և տալիս ցանկալի արդյունք:Փորձը ցույց է տվել, որ համատեղ գործունեության ընթացքում ուսուցիչների և ծնողների շփման արդյունքում երեխայի համար մշակվում են ուսուցման և դաստիարակության ավելի արդյունավետ, նպատակային, իրագործելի ձևեր, որոնց կատարումը լինում է հնարավորինս պարզ և դյուրին:Համագործակցության արդյունքում երևան են հանվում երեխայի անհատական նախասիրությունները, ուսումնասիրվում է միջավայրը, որտեղ ծնվել ու մեծացել է նա, դրանցից բխող լավ ու վատ կողմերը:Խորագիտության շնորհիվ ուսուցիչը նրբանկատորեն պետք է հայտնաբերի ընտանիքի,միջավայրի թերի և առավել կողմերը,իր գործունեության ընթացքում վերացնի վատը, խթանի լավը՝ պարտադիր մասնակից դարձնելով ընտանիքին:Եվ այս բոլորը անհրաժեշտ է կատարել աննկատ՝ չվիրավորելով և չվնասելով երեխայի արժանապատ-վությունը:Նա ուսուցչի և իր ծնողի շփման ժամանակ պետք է զգա փոխադարձ հարգանք,հասկացվածություն, որպեսզի ինքն էլ աստիճանաբար ձգտի լինել նրանց համագործակցության կարևոր մասնակիցը: Ուսուցչի անաչառ վերաբերմունքը դպրոցում պետք է հստակ սահմանի հավասարություն բոլոր սովորողների միջև՝ անկախ նրանց ծնողների սոցիալական դիրքից: Նա իր ուսումնասիրությունների արդյունքում կհայտնաբերի սովորողների լավ ու վատ,դրական ու բացասական կողմերը, ընդունակությունների չափը և աշխատանքները կպլանավորի ըստ անհրաժեշտության, ճիշտ ժամանակին: Անձի ճիշտ ձևավորման գործում դպրոցը և ընտանիքը իրենց աշխատանքներով պետք է լրացնեն մեկը մյուսին,լինեն մշտական կապի մեջ: Երբ ընտանիքը ներգրավված է իր երեխայի կրթության գործընթացում,ծանոթ է կատարվող աշխատանքների բովանդակությանը, սա միայն դրական խթան է կրթադաստիարակչական բարձր որոկների ձեռքբերման համար: Շարունակական համագործակցությունը ակնհայտ է հատկապես երեխայի վարքագծային դրսևորումներում:Ժամանակի ընթացքում սովորողի մոտ ձևավորվում են տարբեր հմտություններ,որոնք նա դրսևորում է տանը,դպրոցում,հասարակության մեջ: Լինում են դեպքեր, երբ երեխան մոլորության մեջ է գցում ընտանիքին և դպրոցին,որը կարող է լինել տարբեր պատճառներով՝ շրջապատի ազդեցություն, տարիքային և ներանձնային առանձնահատկություններ, ինքնուրույնության դրսևո-րումներ, բոլորին անխտիր դուր գալու կամ հակառակվելու մղումներ:Թվարկ-վածները այս կամ այն կերպ կարող են ազդել երեխայի

գործողությունների վրա՝ նրան դարձնելով գերակտիվ, պասիվ, չափից դուրս հետաքրքրասեր կամ անտարբեր ամեն ինչի նկատմամբ:Այստեղ է, որ շատ կարևորվում է դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեությունը, մշտադիտարկումը և ազնիվ լինելը երկու կողմերի միջև: Շատ կարևոր է և անհրաժեշտ, որ մեկի կողմից հայտնաբերված շեղումները ճիշտ և նրբանկատորեն ներկայացվեն մյուս կողմին, չփորձել թաքցնել, քողարկել որևէ գործողություն, այլ պետք է դրանք հայտնաբերելուց հետո քննարկել, վեր հանել պատճառները, փնտրել ու գտնել տվյալ երեխայի համար անհատական, ճիշտ և դրականը տանող ձևերը: Երեխայի հետ աշխատելիս կարևոր է,որ նախընտրություն տրվի համագործակցության լավագույն տարբերակին՝ չմոռանալով նրա տարիքային, սեռային,ընտանեկան, առողջական առանձ-նահատկությունները: Նշվածների մեջ բոլորն էլ կարևոր են, բայց ընտանեկան առանձնահատկության բացահայտումը պետք է կատարի հենց ընտանիքը՝ բարձրաձայնելով լավ ու վատ կողմերը դրական արդյունքի համար:Պետք է գիտակցել, որ ցանկացած քողարկում կարող է բերել վատ,նույնիսկ անդառնալի հետևանքների,քանի որ երեխան միշտ տեսնում է այն ,ինչ մեծահասակները չեն նկատում:

Դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեության ձևերից է ծնողական ժողովների կազմակերպումը, անհատական և ընդհանրական հարցերի համատեղ քննարկումը, որոշումների ընդունումը,ծնողական հաջողված փորձի ներկայացումը և փոխանակումը: Շատ կարևոր է, որ սովորողի դպրոցական կյանքի բոլոր դրվա-գները, հաջողությունները, ձեռքբերումները, անկումները, առաջադիմության ան-կումները ընտանիքում բոլորն իմանան և կրեն պատասխանատվություն: Շատ կարևոր է, որ ժողովներին պարբերաբար մասնակցեն մայրը և հայրը հավասա-րապես: Մեր օրերում ժողովներին մասնակցում է միայն մայրը կամ միայն հայրը: Եվ ժողովների ընթացքում քննարկված տարաբնույթ հարցերին չեն տեղեկանում ընտանիքի մյուս անդամները կամ շատ դեպքերում որոշ հարցեր անտեսվում են՝ ընտանիքում նյարդային, լարված մթնոլորտ չստեղծելու համար: Այս ամենից հետո պարտադիր առաջանում են բարդ խնդիրներ:Այստեղ է,որ դպրոցը պետք է և պարտավոր է ստեղծել խելացի և նպատակաուղղված համագործակցություն՝ կարևորելով երեխայի դաստիարակության խնդրի լուծումը:

Համատեղ գործունեության ժամանակ շատ կարևոր է հաշվի առնել ծնողների ակտիվ կամ պասիվ լինելը: Երբ դպրոցն ու ընտանիքը գնում են միմյանց ընդառաջ, ապա բարձրանում է սովորողի կրթական որակը: Քիչ չեն դեպքերը,երբ ունենք ոչ հետևողական, անտարբեր ընտանիքներ, որոնք անուղղակիորեն բացասական են ազդում երեխայի կրթական որակի վրա՝ նույնիսկ չգիտակցելով այդ ամենը:Սա լուրջ

և մտածելու առիթ տվող հարց է և անհրաժեշտ է ցույց տալ անհատական,համակարգված մոտեցում՝ չոտնահարելով ընտանեկան արժանա-պատվությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տրամաբանված և ճշգրիտ բացատրությունները տալիս են դրական արդյունք: Ընտանիքի գիտակցությանը պետք է հասցնել այն փաստը, որ երեխան ընդգծված անհատականություն է, այլ ոչ թե ինչ-որ մեկի «սեփականությունը» :Ինչպես արդեն նշել ենք, երեխայի հետ չի կարելի շփվել կոպիտ,գործադրել հոգեբանական և ֆիզիկական բռնություն, ամեն անհաջողության կամ սխալի համար պատժել կամ զրկել սիրած իրից, զբաղմունքից: Այստեղ ևս կարևորվում է դպրոցի և ընտանիքի համագործակցությունը:Պետք է կարևորել մի քանի ձևեր,որոնք կտան դրական արդյունք:Նշենք դրանցից առավել կաևորները.

1.Երեխայի կրթական և դաստիարակչական հարցերի պարտադիր քննարկում ծնողների կամ խնամակալների հետ,

2.Երեխայի ընտանեկան և դպրոցական կյանքին վերաբերվող խնդիրների քննարկում,

3.Կրթական և դաստիարակչական հարցերում համատեղ որոշումների կայացում

4.Յուրաքանչյուր տարվա սկզբում ծնողական ժողովի ժամանակ կարելի է առաջարկել տարբեր հարցաթերթիկների լրացում և պատասխաններից բխեցնել տարվա ընթացքում նախատեսվող աշխատանքները:

Այսպես կարելի է պարզել երեխայի առավելությունները, թերությունները,ինչ հետաքրքրություններ ունի,ինչ պարտականություններ ունի նա տանը, ինչով է զբաղվում ազատ ժամանակ,ուսումնական որ առարարկաներն է հաճույքով, հեշտությամբ սովորում, որոնք՝ պարտադրաբար և այլն: Ըստ անհրաժեշտության հարցերը կարելի է փոխել: Այստեղ կարևոր է պահպանել բարեվարքության կանոնները, քանի որ կլինեն ծնողներ, որոնք կհրաժարվեն մասնակցել հարցաթերթիկի լրացման գործընթացին:Շատ կարևոր է կարողանալ լսել բոլորին, համոզիչ և տրամաբանված փաստերով բացատրել գործընթացի անհրաժեշտությունը: Հարկ է, որ ընտանիքը լավ գիտակցի երեխայի կրթության և դաստիարակության գործընթացում դպրոցի կարևոր, օգնող և սատարող դերը,ինչպես նաև գնահատի այն: Անհրաժեշտ է, որ ծնողը կարողանա ընդունի դրական, բացասական կամ քննադատական դիտարկումները և համագործակցության մեջ մտնի դպրոցի հետ հանուն երեխայի կրթության գերազանց որակի և սրանից բխող արդյունքի:Այստեղ է, որ դպրոցն ու ընտանիքը պետք է միասին բռնեն երեխայի ձեռքը և նրան տանեն միայն դեպի լավը, բարին:

Դպրոց և ընտանիք համագործակցության մեջ կոնֆլիտները,վնասակար և ունայն սկզբունքայնությունը, անկառավարելիությունը, իրավունքների, պարտականություն-ների սահմանագծի խախտումները տեղ չունեն:Շատ կարևոր է ըստ անհրաժեշտութ-յան գործընթացում հոգեբանի ներգրավումը, քանի որ հաճախ կարևոր է ճիշտ մաս-նագիտական մոտեցումը՝ տարիքային առանձնահատկություններից և կարիքներից ելնելով:

Դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեության բովանդակությունը խորը և ծա-վալուն է, ձևերը՝ բազմաթիվ ու բազմազան: Շատ կարևոր է երեխայի կրթության և դաստիարակության որակի բարելավման նպատակով ընտրել ճշգրիտը, արդյունավետը և նվազագույնի հասցնել որևէ բացթողում, վրիպում, քանի որ ավելի լավ է միանգամից ճիշտ ճանապարհով գնալ, քան սխալվել, հետո ուղղել:

Գլուխ 2.Դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեության բովանդակության և ձևերի անհատականացումը՝ այն բխեցնելով սովորողներիի անհատական պահանջներից և կարիքներից

21-րդ դարում հանրակրթության մեջ կարևորվում է դպրոցի և ընտանիքի համագործակցությունը: Ուսումնասիրությունները ցույց են տվել,որ ծնողի գիտակցված մասնակցությունը կրթական գործին նպաստում է երեխայի ներանձնային, միջանձնային և ուսումնական հարցերի դրական կարգավորմանը: Եվ դպրոցի ու ընտանիքի համագործակցության անբաժանելի դրույթներից է բովանդակության և ձևերի սահմանումն ու կատարումը՝ հաշվի առնելով երեխայի անձնական պահանջները և կարիքները:(5,17.10.2022)

Մարդկության զարգացման ընթացքում փոխվել են մոտեցումները, և այսօր կրթության համակարգում առաջնային է ներառական կրթությունը, որը ուղղված է հավասար կրթության ապահովմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք(այսուհետև՝ ԿԱՊԿ) ունեցող մարդկանց ներգրավվածությանը կրթության մեջ: Ներառական կրթությունը հասկանալի և մատչելի կրթություն է բոլորի համար, և դրանից շահում է սովորողը, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: Այն գործընթաց է, որի հիմքում ընկած է բոլոր սովորողների կրթության հավասար պայմանների սահմանումը: Այստեղ կարևոր է դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեության բովանդակության և ձևերի ճշտգրիտ ընտրությունը յուրաքնչյուրի համար: Անհրաժեշտ է աշխատանքները համակարգել՝ կարևորելով անձնային առանձնահատկությունները և անհատական կարիքները: Ներառական կրթության պայմաններում ԿԱՊԿ ունեցող սովորողներին դաստիարակող ընտանիքներին ուղղորդելով և աջակցելով՝ անհրաժեշտ է նպաստել,որ ծնողների մոտ ձևավորվեն ակտիվ կյանքի ձգտում,որպեսզի կարողանան հաղթահարել դժվարությունները և բարոյահոգեբանական բազում խնդիրները, որոնք առաջանում են երեխայի խնամքը, կրթությունը և դաստիարակությունը իրականացնելիս: Շատ կարևոր է, որ դպրոցը և ընտանիքը գործեն համատեղ, և ինչպես արդեն նշվել է նախորդ գլխում, քայլեն միմյանց ընդառաջ: Ընտանիքի հետ աշխատելիս կարևոր է բովանդակության նպատակային և կատարելի լինելը: Առավել կարևոր է, որ ԿԱՊԿ ունեցող աշակերտի ծնողը հստակ գիտակցի հետևյալը.

1.Ընտանիքը սովորողին պետք է ընկալի որպես թաքնված և դեռևս չբացահայտված կարողություններով անձնավորության,

2.Օգնել ընտանիքին սովորողի համար ստեղծել ընտանեկան հարմարավետ միջավայր,

3.Բարոյահոգեբանական աջակցություն դժվարությունների հաղթահարման ընթացքում,

4.Ընտանիքի՝ ծնողների ակտիվ մասնակցության պայմանների ստեղծում սովորողի կրթության և դաստիարակության գործում,

5.Սովորողների և ծնողների միջև առողջ հարաբերությունների ձևավորում,

6.Սովորողի և հասակակիցների միջև առողջ հարաբերությունների ձևավորում,

7.Դպրոցի(ուսուցիչների), ծնողների և սովորողների համատեղ գործունեության ծրագրի ստեղծում, աշխատանքների պլանավորում,

8.Հստակեցնել դպրոց-ընտանիք համատեղ գործունեության անհրաժեշտությունը, կարևորությունը:

Մեր կողմից վերը նշված կետերի բովանդակությունը ուղղված է բոլորի համար իրավահավասար կրթության ապահովմանը, որն էլ կհանգեցնի համատեղ գործունեության ակնկալելի և իրական վերջնարդյունքի:(5,17.10.20222)

Շատ կարևոր է դպրոցի դերը սովորողի թաքնված կարողությունների հայտնաբերման գործում, քանի որ ծնողը շատ հաճախ զանազան զբաղվածության պատճառով կարող է անտարբեր լինել դրանց նկատմամբ կամ անտաղյակ: Համատեղ գործունեության ընթացքում հարցազրույցների, հարցաթերթիկների, խորհրդատվության միջոցով կբարելվավվի ԿԱՊԿ ունեցով սովորողի կյանքի և կրթության որակը:Դպրոցը պետք է աջակցի ընտանիքին սովորողի համար տանը ևս հարմարավետ միջավայրի ստեղծման գործում: Սա ևս կարևոր ու անհրաժեշտ է հենց ծնողի համար,որը սովորողի մոտ կնկատի առաջընթաց և բարելավում:

Դպրոցի դերը մեծ է նաև ընտանիքին ցուցաբերած բարոյահոգեբանական աջակցության, ինչպես նաև նրա առջև ծառացող դժվարությունների հաղթահարման գործում: Շատ կարևոր է,որ ընտանիքը մասնակցի սովորողի համար նախատեսված կրթության և դաստիարակության աշխատանքներին: Նա կօգնի աշխատանքների պլանավորմանը: Ծնողը, շատ լավ իմանալով սովորողի առողջության պատմու-թյունը,կօգնի մշակելու արդյունավետ մեթոդներ և ձևեր՝ ճիշտ գնահատելով կարիքները և անձնային հատկանիշները:

Սովորողների և հասակակիցների միջև անհրաժեշտ է ձևավորել ոչ խտրական, պատշաճ հարաբերություններ, առանց ավելորդ ընդգծված վերաբերմունքի:Այստեղ կարևոր է, թե դպրոցը ինչպես կնախապատրաստի հասակակիցներին ընդունել տարբեր խնդիրներ ունեցող իրենց ընկերոջը:Այս պահը ամենանուրբ և թավշյա մասն է, որի ճշգրիտ կատարման համար պատասխանատվություն են կրում դպրուցն ու ընտանիքը միաժամանակ:Դպրոցը սովորողներին ճիշտ ընտրված բառերով և ար-տահայտություններով պետք է նախապատրաստի տարբեր

խնդիրներ ունեցող երեխայի հետ հանդիպմանը՝ չոտնահարելով և չխախտելով բոլորի իրավունքները: Ցանկալի է, որ ընտանիքը ևս մասնակցի այս գործընթացին: Եվ այստեղ շատ կարևոր է մտածողության, համոզմունքների և արժեքների հստակեցումը և ներկայացումը:

Ընդհանրապես կրթական-դաստիարակչական ցանկացած գործունեություն ծավալելուց առաջ պետք է կարևորվի դպրոց-ընտանիք համատեղ գործունեության անհրաժեշտությունը:Եվ վերջին տարիներին շատ է բարձրացել մարդկանց գիտակցությունը, և փոխվել է վերաբերմունքը տարբեր խնդիրներ ունեցող մարդկանց նկատմամբ:Եթե զուգահեռներ անցկացնենք հանրակրթության չափորոշչում ԿԱՊԿ ունեցող սովորողների և նրանց հասակակիցների համար սահմանված իրավունքների միջև,վստահորեն կարող ենք ասել, որ բովանդակությունը մեկն է՝ ապահովել կրթության հավասար պայմաններ յուրաքան-չյուրի համար:

Դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեության մեջ կարևոր են նաև բովանդակությունից բխող ձևերը՝ ըստ անձնային պահանջների և կարիքների: Ընդհանրապես առաջնային են համարվում հարմարեցումները տանը և դպրոցում: Սա նշանակում է,որ ԿԱՊԿ ունեցող սովորողը պետք է պարտադիր զգա տեղի և տարածքի հարմարավետությունը: Բերենք մի քանի օրինակներ. հենաշարժողական խնդիրներ ունեցողների համար պետք է նախատեսված լինեն թեքահարթակներ, տեսողական խնդիրներ ունեցողների համար պետք է լինեն ձայնային գրքեր,թույլ տալ նրանց հարցերին պատասխանել բանավոր և այլն: Հարմարավետություն սովորողը պետք է զգան նաև տանը:Այս հարցում ծնողին օգնության պետք է հասնի դպրոցը, ուսուցիչները, մասնագիտական աջակցության խումբը: Ըստ կարիքների անհրաժեշտ է կատարել անհատական աշխատանք ծնողների հետ: Համատեղ գոր-ծունեության համար ներկայացնենք մի քանի ձևեր.

1.Ուսուցիչը այցելում է սովորողի տուն, ծնողի համաձայնությամբ ուսումնասիրում է տան, մուտքի, բնակարանի և շրջակայքի հարմարավետությունը,

2.Ընտանիքում հանդիպում է բոլոր անդամների հետ,ովքեր համատեղ բնակվում են տվյալ սովորողի հետ,

3.Զրուցում է ընտանիքի անդամների հետ նրանց կարիքների, խնդիրների և սոցիալական վիճակի մասին,

4.Դիտարկում է ընտանիքի վերաբերմունքը սովորողին,

5.Կատարում է խորհրդատվություն վարքի, ուսուցման, խնդիրների լուծման հարցում, տրամաբանված և սպառիչ պատասխանում է ծնողների մոտ առաջացած բոլոր հարցերին,

6.Ծնողների հետ անց է կացնում թեստ՝ իրավիճակը ճիշտ հասկանալու և գնահատելու համար,

7.Ծնողներին տրամադրում է տեղեկություն այն մասին, թե դպրոցում սովորողի որոկյալ կրթության համար ինչպես, ինչ պայմաններում և որ դեպքում դիմել մասնագիտական աջակցության խմբին :

Դիտարկման արդյունքում ակնհայտ է դարձել,որ ուսուցչի այցելության ժամանակ կլուծվեն շատ խնդիրներ, անհրաժեշտության դեպքում հնարավոր է նաև դիմել համանքի պատասխանատուի աջակցությանը՝ շենքային պայմանների բարելավման համար: Ուսուցչի, մասնագետների պարբերաբար հանդիպումները ընտանիքի բոլոր անդամներ հետ, նրանց հետ վարվող զրույցները կբարձրացնեն ծնողների մոտ իրավիճակի գնահատման գիտակցական մակարդակը և կբարելավեն սովորողի դաստիարակության և կրթության գործընթացը: Զրուցների ընթացքում յուրաքանչյուր անգամ կկատարվի կարիքների,խնդիրների, սոցիալական վիճակի գնահատում, ըստ անհրաժեշտության և կարիքների կցուցաբերվի աջակցություն: Ընտանիքի հետ քննարկումները կնպաստեն սովորողի խնամքի,նրա նկատմամբ վերաբերմունքի որակի դրական փոփոխությանը: Դպրոցի կողմից կատարված խորհրդատվության արդյունքում կբարելավվի ծնողների, խնամատարների բարոյահոգեբանական վիճակը, և նրանք պատրաստ կլինեն ավելի դժվար խնդիրների հաղթահարմա-նը,ինչպես նաև կկարգավորվի մասնագետների հետ ճիշտ համագործակցությունը:

Դպրոցի կողմից անցկացված իրավիճակի գնահատման թեստի արդյունքները կքննարկվեն և կգնահատվեն դպրոց-ընտանիք համագործակցության ընթացքում և կպլանավորվեն հետագա անելիքները:

Հարկ է նշել, որ դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեության բովանդակությունն ու ձևերը քարացած չեն,կարող են փոխվել,լինել տարբեր,բխեն իրավիճակից,նպաստեն երեխայի առողջության, կրթության և դաստիարակության որակի բարձրացմանը:

ԿԱՊԿ ունեցող սովորողների կարողունակությունների,հմտությունների ձևավորման, հետագա գործունեության լավ արդյունքի համար շահագրգիռ և պատասխանատու են դպրոցը,ընտանիքը:Այս հարցում շատ կարևոր է, թե ինչ մակարդակում է ծնողների, ուսուցիչների և մասնագետների հարաբերությունները,դպրոցի և ընտանիքի միջև բարության,վստահության,հանդուրժողականության,փոխադարձ հասկացվածության մթնոլորտը:Եվ համատեղ,համակարգված աշխատանքի կազմակերպման ընթացքում շատ կարևոր է հաշվի առնել մի քանի կետեր.

1.Դպրոց-ընտանիք համագործակցության ընթացքը պետք է նպաստի ծնողի դերի ամրապնդմանը և բարձրացմանը,

2.Համագործակցության ընթացքում մանկավարժական տակտի պահպանում,ուսուցչի կողմից սովորողի ընտանեկան կյանքին անհիմն միջամտության բացառում ,

3.Կարևորել ընտանեկան ուժեղ և դրական կողմերը և առաջնորդվել դրանով:

Դպրոցի գործունեության բաղկացուցիչ մաս է նաև ծնողների ինքնակրթությունը,այն անընդհատ գործընթաց է, իրականացվում է ինքնուրույն, ծնողական ժողովների ընթացքում,դպրոցի հետ համատեղ գործունեության ժամանակ կամ անհատական: Սովորողի մոտ առաջացած զանազան հարցերը հարկ է քննարկել անհատական, առանց այլ ծնողների ներկայության՝ պահպանելով էթիկայի բոլոր կանոնները:

Չենք կարող չնկատել,որ ցանկացած տեսակի կարիքներ ունեցող սովորողի հետ աշխատող ուսուցիչները ևս ունեն հոգեբանական աջակցության կարիք,քանի որ տարվող աշխատանքը պահանջում է առանձնահատուկ ջանք: Լինում են դեպքեր, երբ մասնագետների մոտ առաջանում են վախ և անորոշություն. վախենում են, որ լիովին չեն կարող վերահսկել իրավիճակը,քանի որ այն դեռևս անորոշ է: Հենց ճգնաժամային այս իրավիճակներում կարող են առաջանալ հոգեբանական խնդիրներ,ուստի կարևոր է, որ ուսուցիչը միշտ հիշի.մանկավարժի աշխատանքը բարդ, պատասխանատու, շուրջօրյա, մեծ ջանքեր և մասնագիտական ու ակադեմիական գիտելիքներ պահանջող աշխատանք է, կրթության և դաստիարակության դժվարություններ կարող են ունենալ բոլոր սովորողները, և այդ ամենը անպայման հաղթահարելի է, եթե կատարվում է համակարգված, նպատա-կային՝ հաշվի առնելով և ճիշտ գնահատելով բոլոր սովորողների կարիքները:

Դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեության արդյունքում մենք կունենանք կրթված,զարգացած և հասուն հասարակություն:Ծնողը կգիտակցի,որ իր երեխայի կրթությունը և դաստիարակությունը երկարատև, աշխատատար,շարունակական գործընթաց է,որի ընթացքում ինքը ևս ձեռք է բերում շատ-շատ կարողունակություններ ու հմտություններ,որոնք օգնում են լինել ուժեղ, խելացի, հավասարակշռված, և ինքը ևս պետք է լինի այդ ամենի անմիջական իրականացնողը:

Եզրակացություն

Հիմք ընդունելով հետազոտության ընթացքում կատարած մեր պնդումները ՝ ներկայացնենք դիտարկումներ.

1.Դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեության բովանդակությունն ու ձևերը ապահովում են սովորողների բարձրամակարդակ կրթություն, հնարավորություն են տալիս ստեղծել բարձր գիտակցական մակարդակ ունեցող հասարակություն:

2. Դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեության ընթացքում կարևորվում է ընտանիքի և դպրոցի դերը միաժամանակ:

3.Սովորողների կրթության և դաստիարակության գործում կարևորվում է ուսուցչի, ընտանիքի լավագույն օրինակի դերը:

4. Դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեության արդյունքում սովորողների մոտ ձևավորվում են կարողունակություններ (ա.լեզվական կարողունակություն և գրագիտություն, բ.սովորել սովորելու կարողունակություն, գ.ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն, դ.ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն, ե.թվային և մեդիա կարթղունակություն, զ.մշակութային կարողունակություն, է.մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն,ը.տնտեսական կարողունակություն), որոնք կօգնեն նրան լինել ինքնուրույն, խելեցի, հասարակության լիիրավ անդամ:

5. Դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեությունը ապահովում է կրթություն բոլորի համար՝ հաշվի առնելով անհատական և անձնային կարիքները, նպաստում է քարացած կարծրատիպերից զերծ մնալուն, ստեղծում «առողջ» փոխհարաբերություններ սովորողների,նրանց հասակակիցների, ծնողների, ուսուցիչների միջև:

6.Սովորողների կրթության և դաստիարակության գործընթացում դպրոցը և ընտանիքը կունենան համատեղ պահանջներ և նպատակներ,որի արդյունքում կհայտնաբերվեն և կզարգացվեն նրանց թաքնված կարողությունները:

7. Դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեությունը սովորողների մոտ կարմատացնի այն տեսակետը, որ մարդու արժեքը կախված չէ միայն նրա հնարավորություններից և կարողություններց, բոլոր մարդիկ էլ միմյանց կարքն ունեն:

8.Հասարակության մեջ կձևավորվի գիտակցում, որ ուսուցիչներն էլ, սովորողների ընտանիքներն էլ ունեն խնդիրներ(անձնական,հոգեբանական),դրանք կարելի է

հաղթահարել միմյանց հանդեպ ցուցաբերած սիրո և հարգանքի շնորհիվ:

9.Հասարակությունը,ընտանիքը կգիտակցի, որ բոլոր մարդիկ էլ կարող են սովորել և ունեն դրա իրավունքը:

10. Դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեության արդյունքում ընտանիքը կգիտակցի,որ պատասխանատվությունը,ներգրավվածությունը կրթության գործընթացում կարևոր պայման են սովորողների զարգացման համար, և կնպաստեն հետագայում աշխատանքները ճիշտ ուղղությամբ տանելու գործընթացին:

11. Դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեության ժամանակ միմյանց օգնելով հնարավոր կլինի հաղթահարել հուզական, անձնական բնույթի շեղումները և խախտումները:

12. Դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեությունը ապահովում է ներառական կրթության գրագետ իրականացում,զարգացնող գործողություններով մեծացնում է ծնողների հասարակական ակտիվությունը:

13.Դպրոցը ընտանիքի հետ համատեղ գործունեության ընթացքում պետք է ցուցաբերի միասնական մոտեցում սովորողի շահերի և նրա ապագայի համար:

14.Կարծում ենք,որ դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեության մեջ շատ կարևոր են մարդկային որակները,արժեքները,ուստի անհրաժեշտ է լինել պատասխանատու,հանդուրժող և արդարամիտ:

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ

1. «Մանկավարժություն», Դասախոսությունների դասընթաց, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1969
2. 2.Վ. Ա. Սուխոմլինսկին դաստիարակության մասին,«Լույս» հրատարակչություն, Երևան, 1976
3. «Տարիքային և մանկավարժական հոգեբանություն»,պրոֆ. Ա. Վ. Պետրովսկու խմբագրությամբ,«Լույս» հրատարակչություն, Երևան, 1977
4. «Մանկավարժություն»,ուսումնական ձեռնարկ մանկավարժական ինստիտուտի ուսանողների համար,Տ. Ա. Իլյինա,Ն. Ա. Սարոկին,Յու. Կ. Բաբանսկի,Յու. Կ. Բաբանսկու խմբագրությամբ,«Լույս» հրատարակչություն, Երևան, 1986
5. https://www.unicef.org/armenia/media/3501/file/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80.pdf
6. https://hy.wikipedia.org/wiki/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6